ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

«ՊԱՏՐԻՈՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ №1268 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ԹԵԼ-ՍԵԼ ԻՆԿԱՍԱՑԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 29-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 13-ի «ՊԱՏՐԻՈՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №33Ա որոշմամբ «ՊԱՏՐԻՈՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №1268 թույլտվությունը վերաձևակերպել «ԹԵԼ-ՍԵԼ ԻՆԿԱՍԱՑԻԱ» սահմանափակ պատասխանա-տվությամբ ընկերության անվամբ ՝ թույլտվության պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

   «ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԹԵԼ-ՍԵԼ ԻՆԿԱՍԱՑԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- --------- 2021թ.